ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ

ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության

փորձագետ ԿԱՐԻՆԵ ԲԱԲԱՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Մասնակցել եմ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում գործող իրավական ակտերի վերլուծությանն ու լրամշակմանը:

Տեղեկացնում եմ, որ «1146.Հանրակրթության ծրագրի» «11016. «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» միջոցառման շրջանակներում Նախարարության և հրատարակչությունների միջև կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրերի» պահանջների համաձայն՝ 1-ին, 3-րդ և 4-րդ դասարանների 2023 թվականին վերահրատարակվող դասագրքերի տպագրական աշխատանքները ժամանակին ավարտվել են: Աշխատանքների ավարտի վերաբերյալ իմ կողմից կազմվել են հանձնման-ընդունման արձանագրություններ, ակտեր և եզրակացություններ, որոնք զեկուցագրով ներկայացվել են հաշվապահական հաշվառման վարչություն՝ հրատարակչություններին վճարում կատարելու:

Հարկ եմ համարում նշել, որ առաջին անգամ պետբյուջեի միջոցներով Նախարարության պատվերով 2023 թվականին ձեռք բերվող բրայլյան տառատեսակով տպագրվող դասագրքերի տպագրությունն իրականացվում է փուլային եղանակով: Հոկտեմբեր ամսին արդեն իսկ ավարտվել է 32 անուն դասագրքերի տպագրությունը, որոնց վերաբերյալ իմ կողմից կազմվել են հանձնման-ընդունման արձանագրություններ, ակտեր, եզրակացություններ, որոնց հիման վրա նույնպես կատարվել է վճարում հրատարակչությանը:

Կազմել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «2023-2024 ուստարում հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր դասագրքի համար ներդրումային գումարի չափը հաստատելու մասին» N 1805-Ա/2 հրամանի

նախագիծը: Երկրորդ, հինգերորդ, յոթերորդ, տասներորդ դասարանների դասագրքերի ստեղծման համար հայտարարված դրամաշնորհային մրցույթների արդյունքների ամփոփումից հետո իմ կողմից կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի ««Հանրակրթության պետական չափորոշչի» ներդրմամբ պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու մասին» N 1817-Ա/2 հրամանի նախագիծը:
Կնքվել են պայմանագրեր դասագրքեր ստեղծող ֆիզիկական անձանց և իրավաբանական կազմակերպությունների հետ: Կազմել եմ թղթային և էլեկտրոնային դասագրքերի հանձնման-ընդունման ակտեր, որոնք ներկայացվել են հաշվապահական հաշվառման վարչություն՝ վճարում կատարելու: Որպես մրցութային հանձնաժողովների անդամ և քարտուղար մասնակցել եմ բոլոր աշխատանքներին: Արձանագրվել է մրցությանն հանձնաժողովի թվով 12 նիստ: Հանրակրթության վարչության կողմից կազմել և ներկայացրել եմ տարաբնույթ զեկուցագրեր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարին, ֆինանսաբյուջետային, գնումների, կազմակերպատնտեսական, իրավաբանական, արտաքին կապերի և սփյուռքի և մյուս վարչություններին:
«1146.Հանրակրթության ծրագրի» «11016.«Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» միջոցառման շրջանակում իրականացվել են աշխատանքներ, որոնք վերաբերում են 2024-2026 թվականների ՄԺԾ ծրագրի պահանջներին: Որպես դպրոցի Խորհրդի անդամ, մասնակցել եմ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 66 հիմնական դպրոցի, Երևանի Մ. Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի, Երևանի Ս. Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցի, Վաղարշապատի Մ.Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցի, Երևանի Մխիթար Սեբաստացու կրթահամալիրի կառավարման խորհուրդների աշխատանքներին:
Գործող օրենքների և իրավական ակտերի շրջանակում տարբեր կառույցներին տրամադրվել է բանավոր և գրավոր տեղեկատվություն, ուսումնասիրվել և պատասխանվել է քաղաքացիների բազում և տարաբնույթ դիմումներին:

Կ.Բաբայան

17.11.2023թ.